

Իսկրագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԳՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՅԻՐ 24



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԾԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՍԻՆ ԶԻՔ ԵՄԻՍԿՈՒՄԵԼԻՆԻՆԻ
ՄԱՍԻՆ



ԶԱՆԴԱՆԵՐԻՆԻ ԿԱՌԱՐԱԾԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ԶԱՆԴԱՆԵՐԻՆԻ ԿԱՌԱՐԱԾԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՍԻՆ ԶԻՔ ԵՄԻՍԿՈՒՄԵԼԻՆԻՆԻ



ԶԱՆԴԱՆԵՐԻՆԻ ԿԱՌԱՐԱԾԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԶԱՆԴԱՆԵՐԻՆԻ ԿԱՌԱՐԱԾԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ԶԱՆԴԱՆԵՐԻՆԻ ԿԱՌԱՐԱԾԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՍԻՆ ԶԻՔ ԵՄԻՍԿՈՒՄԵԼԻՆԻՆԻ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ هانراكيداق HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 24 || 14 ՅՈՒՆԻՍ 1903

ՕՐՈՒԱՆ ՉՈՐՍ ՄԱՍԵՐԸ

Երբ արեւը կ'ենէ առտուն տիրապէս,
Ու Թարմ փայլին մէջ կը ժպտի ամէն բան.

Երբ լոյսովը զեղեցկութիւն սփռէ ան,

« Ինձ Թըւի Թէ Աստուած անտես »

Ժպտի շնորհով մը անսահման » :

Երբ թոցեղէն Խոյն բարձրանայ կէսօրին,

Աչքն անկարող դիտելու զունտն հրաղէմ.

Իր եռանդէն ալ ճընշուած ես կ'ըսեմ,

« Կը Թափանձէ Տէրն իմ հոգին

Ըզգացումով մեծ ու վըսեմ » :

Երբ բարձունքէն հորիզոնին կողմն իջած,

Ճակատ զուրկ մեղսը կրակէ պնակէն,

Իրկըւան դէմ փնտռէ նեցուկ մը իրեն,

« Թոյլ տայ աչքիս նայիլ Աստուած,

Երկնականարն արձակօրէն » :

Երբ սեւ քողով ծածկէ երկիրը զիշեր,

Շունչն ալ մարէ ցերեկի ջահը պայծառ,


Եւ համր դամբան երբ կը դառնայ այս աշխարհ.

« Թըւի Թէ լուռ խօսի մեր Տէր

Եւ խոստանայ ցերեկ մը վառ » :

Թարգմ. ՄԱՆՆԻՍՆ

Տ. ԹԱՍՏԻԻ



ԲԱՐՈՅԱՎԷՊ

ՆԵԼԼՕՆ

ԵՒ

ՊԱՏՐԱՊԵ

(Շարունակութիւն 23րդ թիւէն եւ վերջ)

Քաղաքի մեծ ժամացոյցը տառնեղիւսը խփեց։ Դռները բացուեցին՝ և ամբոխն իրար անցաւ։ Ամենքը գիտէին որ ընտրած պատկերը փայտէ ձողից կասկած պիտի բարձրացնէին, որ ամենքը տեսնեն։ Յուզմունքից Նելլօի աչքերը մթնեցին, գլուխը պտոյտ եկաւ, ծնկները թուլացան։ Երբ փոքր ինչ ուշքի եկաւ՝ նայեց բարձրած պատկերին, — իւր նկարը չէր։ Մի մարդ ծանր և հնչիւն ձայնով յայտարարեց, որ մրցանակն ստացել է քաղաքի գիշերապահի որդին — Ստեփանը։

Նելլօն ուշքի գալով՝ իրան գտաւ ցուցահանդիսի շինութեան քարէ աստիճանների վրայ ընկած։ Պատրաշը սաստիկ չփոթուած աշխատում էր նրան ուշքի բերել, իսկ հեռուում երևում էր պատանիների մի մեծ խումբ, ուրախ աղաղակներով ճանապարհ էր ձգում իրանց բախտաւոր ընկերոջը — Ստեփանին։

Երեխան վեր թռաւ տեղից, գրկեց շանը և շնջաց։

— Ամեն բան վերջացաւ, սիրելի Պատրաշ, ամեն բան։

Նա շատ թուլացել էր քաղցից, իւր վերջին ոյժը հաւաքելով՝ դանդաղ քայլերով գիւղ ուղեւորուեց։ Պատրաշը իւր բրդոտ գլուխը կախ ձգած՝ քայլում էր նրա կողքից։

Բուլայ-քուլայ ձիւն էր գալիս։ Հիւսիսից փչում էր ցրտաշունչ քամին։ Սաստիկ ցուրտ էր։

Նրանք երկար ժամանակ գնում էին և երբ վերջապէս գիւղին մօտեցան՝ ժամացոյցը չորս խփեց։

Պատրաշը յանկարծ կանգ առաւ, նա ձիւնի տակից մի բանի հոտ առաւ և սկսեց ոտներով ձիւնը փորել, այնքան՝ որ տակից դուրս հանեց մի շագանակագոյն կաշուէ քսակ և Նելլօին տուեց։ Թէեւ մութն էր, բայց մօտակայ խաչելութեան պատկերի առաջ մի լապտեր էր վառուում, որ աղօտ լոյս էր արձակում։

Երեխան մեքենայաբար քսակը լոյսին մօտեցրեց։

Քսակի վրայ գրած էր Բտաս Կօզէզի անունը, իսկ մէջը վեց հազար Փրանկի թղթադրամներ գտաւ։

Այս գիւտը ցրուեց Նելլօի առաջուայ անդգայութիւնը։ Նա

քսակը ծոցը դրեց և Պատրաշի գլուխը շոյեց: Շունը յառած աչքերով դիտում էր նրա դէմքը: Նելլօն ուղղակի ջաղացը գնաց, մօտեցաւ դռանը եւ բաղխեց: Զաղացպանի կինը, ար-



տասուալից աչքերով, դուռը բացեց: Նրա ետեւ կանգնած էր Ալօիզան:

— Այդ դո՞ւ ես, խեղճ տղայ, քնքշութեամբ ասաց կինը. շուտով հեռացիր, որ Կօգէզի աչքին չերևաս: Այսօր մեր գլխին մի մեծ վտրձանք է եկել: Նա գնացել է իւր կորցրած փողերը որոնելու, իսկ այժմ ո՛րքան դժուար կը լինի ձիւնի մէջ բան գտնելը: Այս կորուստով մեր տունը քանդուում է: Մենք որ քեզ այնքան չարիք արինք՝ Աստուած էլ մեզ պատժեց:

Նելլօն քսակը տուեց նրան եւ Պատրաշին ներս կանչեց :

— Պատրաշը քիչ առաջ գտաւ այս փողերը, ասաց նա շտապով : Այս բանը պատմեցէք Կօգէզին, երեւի նա այսուհետեւ կը կը խղճայ ծեր շանը եւ միշտ կերակուր ու ապաստանարան կը տայ : Խնդրեմ չթողնէք, որ իմ ետեւից դայ եւ բարի եղէք դէպի նա :
Եւ նախ քան նրանք իւր դիտաւորութիւնը հասկանային՝ նա համբուրեց Պատրաշին, դուռը արագութեամբ վրայ դրեց եւ անյայտացաւ գիշերային մթութեան մէջ :

Մայր ու աղջիկ այս անսպասելի ուրախութիւնից հազիւ կարողացան ուշքի գալ : Նրանք սկսեցին Պատրաշին փայփայել, քաղցր իւղահաց եւ միս բերին նրա համար եւ աշխտում էին նրան տաքացնել կրակի մօտ : Բայց զուր էր աշխատանքը. անմխիթար Պատրաշը դռան մօտից չէր հեռանում :

Ջաղացպանը ժամը 6-ին յոգնած եւ յուսահատուած տուն դարձաւ :

— Կորա՛ն փողերա, ասաց նա դողդոջուն ձայնով, մենք ամեն տեղ լապտերով ման եկանք, բայց չկայ ու չկայ : Կորա՛ւ աղջկաս օժիտը եւ մեր ամբողջ կարողութիւնը :

Կինը քսակը նրան տուեց եւ պատմեց եղելութիւնը : Խստասիրտ ծերունին ամբողջ մարմնով դողաց եւ յուզուած ընկաւ աթոռի վրայ :

— Ես շատ խիստ վարուեցի խեղճ տղայի հետ, չչնչաց նա վերջապէս, արժանի չեմ նրա այսպիսի վերաբերմունքին :

Փոքրիկ Ալօիզան սիրտ առնելով՝ մօտեցաւ հօրը, փաթաթուեց նրան եւ ասաց .

— Հայրի՛կ, Նելլօն դարձեալ կարո՞ղ է գալ մեզ մօտ, հարցրեց նա կամացուկ :

Ջաղացպանը սեղմեց նրան իւր կրծքին : Նրա խիստ, արեւած դէմքը այժմ դժգոյն էր, իսկ շրթունքները դողում էին :

— Ի հա՛րկէ, ի հա՛րկէ. երբ կամենայ կարող է գալ, պատասխանեց նա. Ծննդեան տօներն էլ մեզ հետ կանցկանցնէ. ես մեղաւոր եմ նրա առաջ, բայց Աստուծոյ օգնութեամբ կ'աշխատեմ մեղքս քաւել :

Ալօիզան ուրախ-ուրախ համբուրեց հօրը, վեր թռաւ նրա ծնկներից եւ վազեց դռանը նստած շան մօտ :

— Այսօր ես կարող եմ Պատրաշին լաւ հիւրասիրել, — աղաղակեց նա մանկական հրճուանքով :

Հայրը որ գլուխը կախ էր ձգել՝ յուզուած ասաց .

— Այո՛, այո՛, հիւրասիրի՛ր շանը, ամենալաւ բաներ ուտացրո՛ւ, դա արժանի է :

Ջաղացը Ծննդեան տօնի առիթով ամեն տեսակ բարիքներով լիքն էր—սերուցք, մեղր, տեսակ-տեսակ համեղ կերակուրներ ու քաղցրաւենիներ. տունը տաք էր և պայծառ լուսաւորուած: Ալօիզան ամէն կերպ աշխատում էր Պատրաշին կերակրել, բայց շունը ոչինչ չէր ուտում: Ճանապարհին նա շատ մըսել ու քաղցել էր, բայց առանց Նելլօի չէր ուզում՝ ո'չ տաքանալ, ոչ մի բան ուտել: Նա դռան առաջ նստած էր և հէնց այն էր մըտածում, թէ ի'նչպէս անէ, որ կարողանայ դուրս ծլկուել:

—Նա Նելլօին է ուզում, ասաց Կոգէզը, ի'նչ բարի շուն է. լուսանալուն պէս ես կերթամ Նելլօին որոնելու:

Ջաղացի խոհանոցը տաք էր. աղքատ հարեւաններն անդադար մտնում էին, տաքանում, մի բաժակ գարեջուր խմում, տապակած սագի մսից ուտում գնում էին. Փոքրիկ Ալօիզան ուրախ էր, որ վաղը իւր խաղընկերը պիտի վերադառնար. նա թռչկում և պարում էր: Կոգէզը ուրախ ժպտում և ասում էր, որ նա անպատճառ կապահովացնէ Ալօիզի փոքրիկ ընկերոջը: Տանտիկինը իւր ճախարակի առաջ նստած նոյնպէս ուրախ էր:

Ամենքն էլ փայփայում և հիւրասիրում էին Պատրաշին, բայց նրա համար ուրախութիւն չկար, քանի որ Նելլօն մօտը չէր:

Երբ սեղանն արդէն պատրաստ էր՝ հիւրերը նստեցին նրա շուրջը եւ սկսեցին բարձրաձայն եւ ուրախ զրոյց անել: Այդ ժամանակ դուռը մոռացմամբ բաց էին թողել. Պատրաշը նոյն բռնապէս յանկարծ դուրս թռաւ և այն ցրտին ու մթանը սկսեց վազել: Նրա միակ ուղածն այն էր, որ Նելլօին գտնէ:

Թ.

Ամբողջ գիշերը ձիւն էր գալիս և Նելլօի հետքը կորել էր: Փոթորկալից գիշեր էր: Ճանապարհներում վառուող լապտերները հանգել էին. քաղաքին պատել էր անթափանցելի խաւարը, ոչ մի կենդանի արարած չէր երեւում, ամենքն էլ զուարճանում էին իրանց տաք տներում: Միայն ծեր Պատրաշը քաղցած փորով և դողալով թափառում էր գիշերային մթութեան մէջ. նրան ոյժ էր տալիս դէպի իւր տէրն ունեցած ամենավառ, աննենգ սէրը:

Կէս գիշերից բաւական անց էր, երբ Պատրաշը քաղաքի մութ և ծուռ ու մուռ փողոցներում գտաւ Նելլօի հետքը: Մթութեան մէջ երբեմն աչքի էր ընկնում պատուհանների կիսափակ փեղկերից և տուն վերադարձող ուրախ հիւրերի լապտերների լոյսը: Լսելի էր միայն փչող քամու խուլ շառաչիւնը. խանութ-

ների գլխին դրած ցուցանակները տեղից պոկուում, իսկ լապտերաների բարձր սիւները շարժուում էին:

Այնքան անցորդներ էին գնացել-եկել ձիւնի վրայով և իրանց հետքերը թողել՝ որ Պատրաշը շուտ-շուտ կորցնում էր իւր բարեկամի հետքը: Բայց յոգնած ու քաղցած կենդանին չէր յուսահատուում և հետքը նորից գտնելով՝ առաջ էր գնում առանց ուշադրութիւն դարձնելու այն անտանելի ցուրտ եղանակի վրայ:

Սուր-սուր սառոյցները կտրատում էին նրա թաթերը, քամին թափանցում էր մինչեւ ոսկորները, բայց նա շարունակ առաջ էր գնում: Նա ուղղւում էր դէպի եկեղեցին:

Եկեղեցու դռները գիշերուայ հսկումից յետոյ բաց էին մնացել: Պատրաշը քարէ սալայտակի վրայ հետքեր նկատեց. այդ հետքերով գնաց մտաւ եկեղեցի, որտեղ միայն խաւար և լուս-թիւն էր տիրում:

Նելլօն պառկած էր սեղանի առաջ յատակի վրայ: Պատրաշ լուսթեամբ մօտեցաւ երեխային, լիղեց նրա երեսը և կարծես փայփայելով ասելիս լինէր. «Մի՞թէ կարծում էիր թէ ես քեզ կը թողնեմ. չէ՞ որ ես քո բարեկամն եմ»:

Տղան մի թոյլ աղաղակ արձակեց և սիրով գրկեց շանը:

—Մեռնե՛նք միասին, չչնջաց նա՛ մենք ոչ ոքի պէտք չենք... ամենքը մեզ թողել են...

Իբրեւ պատասխան՝ Պատրաշն աւելի մօտեցաւ տղային և գլուխը դրեց նրա կրծքին: Արտասուքը պատել էր նրա սևորակ ու մեծ մեծ աչքերը:

Նրանք ամուր փաթաթուեցին միմեանց: Գիշերը շատ ցուրտ էր: Լուսամուտներում երբեմն երեւում էր չղջիկը և երբեմն լոյսի մի ճառագայթ ներս էր թափանցում մութ կամարների տակ: Յուրօր նրանց թմրեցրեց: Երպզում տեսնում էին նրանք իրանց բախտաւոր օրերը՝ երբ միասին վազվզում էին կանաչ մարգագետինների վրայ, նստում էին գետափին եղէգների մէջ և նայում էին մօտից անց կացող նաւակներին:

Յանկարծ մի սպիտակ լոյս ներս ընկաւ և լուսաւորեց եկեղեցին: Լուսնեակը դուրս էր եկել: Նրա կաթնաման լոյսը ուղղակի ընկնում էր Ռուբէնսի երկու նկարների վրայ, որոնց վրայից վարագոյրը տղան ետ էր քաշել եկեղեցի մտնելիս: Նելլօն սթա-փեց և ոտի կանգնեց:

—Վերջապէս ես նրանց տեսնում եմ, աղաղակեց նա բարձրաձայն, և ուրախութեամբ ձեռները դէպի նկարները մեկնելով՝ գոհութեան արտասուք էր թափում աչքերից: — Ո՛հ Աստուած

իմ, շնորհակալ եմ Բեզանից:

Նրա ոտները թուլացան և նա ծնկան վրայ ընկաւ, աչքերը չհեռացնելով հրաշալի նկարներէից: Մի վայրկեանից յետոյ լոյսն անյայտացաւ, նորից պատեց անթափանցելի խաւարը և Նելլօն ընկաւ Պատրաշի կրծքին:

Ժ.

Առաւօտը գիւղի բնակիչները նրանց գտան եկեղեցու սեղանի առջեւ: Երկուս էլ սառել էին: Նրանց վերեւ կախուած էին Ռուբէնի նկարները, որոնք լուսաւորուած էին արեգակի հրաշալի լոյսով: Այդ ժամանակ խտտաւիրտ Կօգէզը մտաւ եկեղեցի և այս տխուր տեսարանի վրայ դառն լաց եղաւ:

— Ես շատ խիստ վարուեցի այս տղայի հետ, ասաց նա, և իմ մեղքս քաւելու համար վճռել էի կարողութեանս կէսը նրան տալ և ինձ որդեգրել:

Յետոյ եկաւ մի հարուստ նկարիչ և ասաց.

— Ես որոնում եմ այն նշանաւոր տղային, որ խկապէս արժանաւոր էր մրցանակ ստանալու: Նրա նկարածը շատ հասարակ պատկեր էր—մի ծեր, յոգնած փայտահատ, բայց զարմանալի տաղանդով: Ես ուզում եմ այդ հանճարեղ տղային ինձ մօտ վերցնել և նկարչութիւն սորվեցնել: Ժամանակով նա երևելի նկարիչ կը դառնայ:

Ամենից յետոյ եկաւ փոքրիկ աղջիկը մետաքսանման գանգուրներով. նա սեղմելով հօր ձեռքը՝ սարսափելի կերպով հեծեճում էր և յուսահատութեամբ ձայն էր տալիս Նելլօին:

— Նելլօ՛, սիրելի՛ Նելլօ, արթնացի՛ր, գնա՛նք, տանը ամէն բան պատրաստ է քեզ համար:

Բայց մանկան գունատ դէմքը, որ դարձրած էր դէպի Ռուբէնի հրաշալի նկարները՝ կարծես ամենքին ժպտալով ասելիս լինէր «ուշ է»:

Ջանգի ներդաշնակ ձայնը ուրախ հնչում էր սառն օդի մէջ, արեգակը լուսաւորում էր ձիւնապատ դաշտերը եւ ժողովուրդը ուրախ-ուրախ անց ու դարձ էր անում փողոցներով: Նելլօն և Պատրաշը այլևս ողորմութիւն չէին խնդրում ոչ մէկից, նրանք էլ բանի պէտք չունէին:

Նրանք իրանց ամբողջ կեանքը միասին էին անց կացրել և մեռնելիս ու մեռնելուց յետոյ էլ անբաժան մնացին: Երբ նրանց գտան՝ տեսան որ տղան այնպէս ամուր սեղմել էր շանը, որ առանց մեծ ջանքի անկարելի էր նրանց բաժանել իրարից:

Նրանց միասին էլ թաղեցին:

Վ Ե Ր Ջ

Գ Ա Ր Զ Ը

Վարէն, վերէն կը ճախրէին քառակուսի տողանցով մը՝ նէմ-
պիւսներու տակէն՝ իրենց հովանոց բռնած: Ամպէ առիքին ներ-
քեւէն գաղթող կռունկները ձմեռուան երկար կեանքը կը խոր-
հըրդանչէին: Պառաւր սեմին վրայ նստած՝ վարակոտ կոճղի մը
նման կռնդ կռնակով, իր խորշխորչուն այտերը վար կը ծանրա-
նային լեցուն կարմրութեամբ մը, ու աչքերուն մէջ հին կեանքի
գոյն մը կը վառէր կարծես: «Երկա՛ր է, երկա՛ր մըթմըթաց
թոյլ ու հատնող ձայնով մը, նորէն... նորէն ան...» ամպերուն
ուղղելով իր յոգնած նայուածքը: Ձմեռը երկար պիտի ըլլար,
ձիւնը՝ տուն, երգիք պիտի ծածկէր անխորհուրդ հիւրի մը պէս,
երկա՛ր, երկա՛ր ատեն: Կռունկները մօտի ամպերուն կպած կը
թռչէին կարծես: Պառաւր տխրեցաւ: Կը հեռանային ալ անոնք
մարդ ճիշեր ուղղելով: Ձմեռուան ջերմաչափն էին կռունկները,
պառաւները կրնային գիտնալ միայն անոր թագուն գաղտ-
նիքը:

Պառաւր պատուհանին առջեւ նստած՝ իմաստասիրական խո-
րունկ խորհուրդներով կը կռուէր կարծես. բայց սխալ չէր. կընձ-
ռոտ խորհուրդներու ամբողջ մը կար իր գանկին մէջ, կորսուած
թել մը կը փնտռէր: Գլուխը ինքնիրեն կ'երերար ումպ ումպ
ջուրով ծանրացած դոյլի մը նման: Ինքնիրենը ձայներ կը հանէր
մերթ մտածումներու լայնութեանը մէջ կորսուած, ու ծոյլ յօ-
րանջ մը կ'ունենար լացէն թմրած տղու մը հանգոյն: Ինքնեկ
խանդաղատանք մը կ'ուռեցնէր պառաւին սիրտը. ա՛խ, իրենը,
իր մոլորած գառնուկը լոյս ռահվիրայի մը մէջ դնելու տենչէն
գինով՝ «Արդեօք, պիտի չգայ օր մը, որ հաւատացեալ տեսնեմ
զինքը» կ'ըսէր, կարծես անտարբեր նայուածքով մը:

Պառաւր շատ կը խորհէր իր անուշիկ թռուան վրայ, երբեմն
կուլար իսկ իր մարմնուն ձայնովը, ու մանկիկ բարկութիւն մը
կ'երերար սրտին մէջ, իր մանչուն ու հարսին անհոգութեան
պատճառաւ, տեսնելով երիտասարդ Յակոբի անհաւատ կեանքը:

Վա՛խ պառաւ, անէծքը չէր պղծած իր հանդարտ չրթները,
անուշիկ հաւատք մը ունէր, թէեւ նախապաշարուածով չաղուը-
ռած. ա՛հ, մեղք էր իրեն համար անիծելը, անիծողը անիծուե-
լով կը մեռնէր:

Յակոբ քսան եւ մէկ տարեկան էր, տարիէ մը ի վեր չըջա-
նաւարտ բարձրագոյն վարժարանէ մը, խորհուն ու մաքնիւող

նայուածքներով: Իր թափանցամտութիւնը կը հալածէր զինքը, չէր կրնար հանգչիլ, պէտք էր խորհիլ, փնտռել, գրքերու մէջ թափառիլ՝ թերաւարժ ոստէ ի ոստ ցատկող ձագ թռչունի մը նման: Է՛հ, պէտք էր զգնել իր կասկածները քանդող մայր առաջնորդ մը:

Շա՛տ, չա՛տ ասանկ չար օրերու մէջ թափառելէ վերջ, կատարեալ պզգիկ անհաւատ մըն էր դարձած: Զէր վայրեր կարծես իրեն այդպիսի կասկածոտի մը հոգիով ապրիլ, ու չէին կասկածեր այդպիսի խորունկ փոսի մը մէջ տապալակիլ:

Խելոքիկ մէկն էր, վախկոտ ու թրթռուն ձայնով. արիւնի մաքուր կարմիր մը կ'ողողէր իր այտերը խօսած ատեն, սրտի խորհուրդներուն պատկերը ջինջ լոյսով մը հայելիացնելով դէմքին վրայ: Ամէն մարդ կը սիրէր զինքը իր մաքուր կեանքին, հրեշտակի ձերմակ կեանքին ու նկարագրին համար:

Ծնողքը, իրենց մէկ հատիկ զաւակնուն վրայ փայլուն գուրգուրանք մը ունէին. ի՛նչ կ'ուզէր թող ըլլար. միայն թէ իրենցն էր, ու իրենց քով պիտի մնար մինչ ցմահ:

Պառաւր շատ տխուր էր: Զայն վռնտելու փորձ պիտի փորձէին, եթէ շատախօս տրտուռքը փսփսար տունիներուն անծեղի մը պէս: Յակոբի վրայ խօսելու իրաւունք չունէր, խռփած խրատներ տալու պատճառանքով:

Խեղճ պառաւր վռնտուելու վախէն ինք իր մէջ էր ամփոփուած՝ ասղնտուած խիռնջի մը նման: Նախկին օրերը կը յիշէր նա, ամբիժ լոյսով լուսաւորուած գաղափարները, երբեմն ժպիտի մը պէս սրտերնուն մէջ թրթռացած. «Ասանկ օրեր ալ կ'ըլլան եղբեր, ըսաւ պոստած դէմքով մը նա. հիմըմվան մարդիկը խոշոր խոշոր խելքեր հըմա՛, բան մըն ալ չեն կրնար ընել»: Այս տեսակ խորհուրդներ կը յղանար պառաւր անսովոր վայրկեաններու մէջ: Բայց ո՛րչափ կը թեւաւորուէին իր վիշտերը կ'այրէր նա, հետզհետէ կ'ուժոյնային իր ջիղերը, կը փափաքէր Յակոբին քով երթալ զայն խրատելու տենչանքով, բայց կը վախնար, չէր համարձակէր իսկ խծիլ. «Ա՛հ, Աստուած իմ, անհաւատ մըն է ան, չսիրեր զիս, պառաւ մըն եմ . . . ոչինչ մը . . . » ու չկրցաւ յանդուգն խրոխտանքով, այցելուի մը նման մտնել անոր սենեակը, որ գրքերու ու տետրակներու հեղեղին մէջ կը լողար, սեւ սփռոցով զրասեղանի մը առջեւ խոնարհուն, դիմացը՝ պատերը՝ խորհրդաւոր ու ընտրեալ պատկերներով զարդարուն:

Պառաւր լսած էր երբեմն տրտունջի պինդ բառեր ու սարսլուացած էր, ինչպէս կենդանի մը սուրին դէմ: «Մեռել տուն չէ, մեռել տուն չէ հոս տեղ, խե՛նդեր, մոռցէք ալ սա խունկ

ծխելու սովորութիւննիդ» կակաղած էր Յակոբ ծով մը ալեկոծելով իր կուրծքին ներքեւ։ Ի՛նչ տխուր խոստովանութիւն, անսահման զգացումի մը յղութեան ծնունդն էին ասոնք։

Ապաշխարող ճգնաւորի մը պէս գրքերու ու տետրակներու խառնադէզ ցրուունութեան մէջ ապրող այս երիտասարդը նիհար դալկութիւնով մը ջլատուիլը կ'զգար սակայն, լուռ խոհանքով մը հատնելու երազանքով պատրաստ, վանականի մը պէս ալ անվախ։ Իր պատարուն առոյգ հասակը կեղեւուած ծառի մը մերկութեան պէս կ'երեւնար հիմա, խորհուրդի ճիգերէն կերուած։ Բայց հիանալի բաց էր աշխատութեամբ անջրպետուած տեսնելը զայն։ անյագ ախորժանք մը կ'զգայիր աշխատելու, ծոյլ ջիղերդ պիտի սարսուային դնդերներուդ մէջ, ու պաշտամունքի պէս բան մը պիտի երեւար քեզ աշխատութիւնը։

Նախկին երազ կեանքը իրեն կը նայէր հիմա ապշած ու լռին երբ անցեալը շօշափէր, խորունկութիւն մը կար անցեալին մէջ, անթափանց ստուերներով վարագուրուած։

Սակայն քաջ նշմարած էր պառաւը ստնտուի մը պէս Յակոբի լուռ հիանդութիւնը։ Ալ պիտի գտնէր զայն սեւ փոսէն հանելու է՛ն վերջին ճարը։ Երկու խորունկ ձմեռներ անցեր էին, արիւնը երակներուն մէջ սառեցնող ձմեռներ, ու պառաւը չէր կրցած ազատել զայն իր պինդ շղթաներէն։ Կը փչէ երրորդին իր երազներուն մարմնացումը տեսնելու հեշտ փառքին վրայ։ Ձմեռ օրուան մ'ատեն սառ կապեր էր այդ կասկածը անոր մէջ։

Պառաւը նախապաշարունմերով կ'ապրէր, ու վառ կը պահէր զանոնք իր սրտին մէջ, Տիրամօր առջեւ վառուած կանթեղին նման։ Կը հաւտար։

* * *

Յակոբ գրասեղանին առջեւ նստած էր յուզուած ջիղերով, նոր բան մը կարդացեր էր, եւ իր հոյակապ միտքը ցնցուելու աստիճան արտակարգ։ Իրական պատկերի մ'առջեւ չէր որ խօսէր, դուրս թափէր իր ներսի եռուզեփը՝ հանդարտութեան անուշ գգուանքն զգալու համար։ Իր գաղափարներուն վերջակէտն էր՝ լացը։ Չէր գիտեր թէ ի՛նչ պիտի ընէր, ինչե՛ր, ինչե՛ր կ'անցնէին իր միտքէն։ Անգամ մը պատուհանին քով վազեց, մարեր էին կապոյտները, ու լայն միջոցը գորշ քօղով մը ծածկուած էր։ Իր տեղը վազեց խկոյն, ու հագիւ հազ կրցաւ գրիչը ձեռք առնել։ Բազուկները կը դողդղային, Յակոբ կորսուած էր ոչնչութեան մը մէջ։ ականջները խուլցեր էին կարծես ու ներշնչումի գաղջ կարմրութիւն մը կը փայլէր իր բրգաձեւ ճակտին վրայ։

Շարաթ իրիկուն մ'էր ան իրիկունը. կոչնակը հեռուէն իր զուարթ կոչը կ'երկնցնէր, կը պոռար, կը մարէր, կը բարձրանար վճիտ ցայտքով մը ու պարապը կ'ալեկոծէր անոր թրթռումներով: Յուզարկաւորութենէ վերադարձող վշտակոծ սգաւորի մը հանգունակ՝ տրտում էր, խուլ ցաւ մըն էր ծանրացած իր վրայ, պատասխանատու մ'էր տգէտ ու ունայնամիտ, պատասխան պիտի չկրնար գտնել իր սիրտն հանդարտեցնող. վերջ մը, միշտ վերջ մը կը փնտռէր իր տաղանդին սկզբունքներով ապրելու տենջանքով, անկարելի բան էր չգտած ապրիլ:

Պառաւը խունկի ծխիչը կը փնտռէր չորս դին ինկած: Գտած էր հիանալի գաղտնիքը, բայց կը դողար, ետ ետ կ'երթային կարծես իր ոտքերը: Գանդաղ աճապարանքով մը, հազիւ հազիւ գտած ու կատուի մը գողունի քալուածքով սկսաւ խունկ ծխել. կրակը կ'այրէր խունկին մարմինը, ու պառաւը երկրպագուի մը գոհունակ սրտով քանի մը անգամ դէմքին քսեց անուշաբոյր ծուխը: Յետոյ տարաւ զայն Յակոբի աշխատատեղին սեմին վրայ դրաւ: Կիսաբաց դռնէն խունկին հեշտ մշուշը, ներս կ'երկննար քմահաճոյքի խաղերով: Ազնուական սրահէն անծանօթներ ներս կը խուժէին անձայն: Սենեակին մէջ մշուշէ մթնոլորտ մ'էր հիւստեալ: Յակոբ ներշնչումի բոցերէն չէր հասկցած պառաւին գաղտնիքը: Կը կարդար անգաղար երեւցնելով իր զլուխը, ա՛խ շատ աղուր էր գրուածքը, չա՛տ խորունկ: Իրերը կը կերպարանափոխուէին իր կասկածոտ նայուածքին առջեւ, խորհրդաւոր ժպիտ մը կար իր շրթներուն վրայ. հրեշտակի աղուոր ժպիտ մը: Գտած էր այլեւս պատրանքներու մէջէն անցնելով ճշմարտին ճամբան, բաւական էր: Խունկին ծուխը կը փայփայէր անոր այտերը մօր մը պէս՝ որ կորուսած տղեկը կը գտնէ:

« Երկնքի լուսաւորներէն վեր ի՞նչ կայ, ի՞նչ բան, ի՞նչ գաղտնիք »: Խա՛, աս բառերն էին զինքը տառապեցնողն. գտած էր այլեւս գաղտնիքը սուր ու ուժգին վերելքով մը. գաղտնիքը կը փայլէր իր աչքերուն մէջ:


Խունկը չէ՛հ ծխար, հատած էր՝ աննխաճացած, ծխիչին անխացած կրակներուն վրայ պաղած փրփուրներ թողլով: Կամաց կամաց ծուխը հալիլ սկսաւ:

Յակոբ խորունկ հաւատացեալ մ'էր եղած:

Պառաւը ժպտեցաւ:

Ատա-Փազար

ԿԱՐԵՆ



ԾԱՆՈԹԱԿՆԵՐՈՒ

ԼԵԶՈՒՆ

ՔՐԻՏՈՒՄԸ ԲՈՅՍԵՐՈՒՆ ՄԷՋ

(Շարունակութիւն 22րդ Խիւէն)

Բ. Նիւրէմպէրկ այսպէս կը խօսի Գառնատունկին * (boromet) վրայ :

« Այս տունկը, կ'ըսէ ան, խիստ հազուադէպ է եւ կ'աճի Աթաւէրիւանի կողմերը, Ռուսաստանի եւ Թուրքաստանի միջև : Այս տունկը կը նմանի ճիւղ փոքր գառի մը՝ դուռած ցօղունի մը վըրայ՝ որ կենդանիին պօրտին կ'աճէ եւ ուրիշ կ'աճէ իր սնունդը : Այս ցօղունը հողէն վեր կը բարձրանայ գրեթէ երկու ոտք : Կ'ըսուի թէ պզտիկ գառնուկը կը սնանի այն խոտովը՝ որ կ'ապրի իր շուրջերը : Երբ խոտ կը պակսի, բոյսը կը չորնայ եւ կը մեռնի սնունդի չբոյութենէ, թէեւ այնպէս կը թուի թէ՛ ցօղունը՝ որովայն կը հանգչի ան, սնունդը կը մատակարարէ անոր : Կը հաւատեն թէ՛ այս բոյս-կենդանին խեցգետնի համ ունեցող միւս մը ունի, եւ թէ՛ երբ զանկա կտրենք դանակով մը՝ արիւն կ'ելլէ : Կ'ըսուի նաեւ թէ գայլերը շատ կը սիրեն այս գառնուկը » :

Հուէզէր եւս հետեւեալ ծանօթութիւնները կուտայ,

« Արշիպեղագոսի կղզիներէն մեծագոյն մասին մէջ կը գնահեն տեսակ մը թզենի՝ զոր Օրնոս կ'անուանեն եւ լատիներէն՝ Բամբի-Ֆիֆիւս : Թուզերը՝ զոր Բորնիս կ'անուանեն, ոմանք Օգոստոսին, ոմանք ալ Նոյեմբերին կը հասունանան : Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներուն այս վերջիներուն մէջ կը ծնի փոքրիկ որթ մը՝ ուրկէ կ'ելլեն փոքր ճանճիկներ՝ որ միայն այս ծառերուն շուրջը կը թռչկոտին : Այս միջատները նոյն իսկ իրենք կը ծակեն նոյն թռչուններէն երկրորդ պտուղը եւ զանի կը հասունցնեն : Այս երկրորդ պտուղը կը կոչուի կրաքիքեր . առաջին թուզերը, Բորնիքները՝ իրենց ճանճիկներու ելլելէն քիչ ետք կը խափին : Կրաթիթերները կը մնան ծառին վրայ՝ մինչեւ Մարտիս կը պահեն այն հաւկիթները՝ զորս դրած են ճանճիկները հոն՝ զանի ծակելով : Մայիս ամսուն մէջ, Օրնի կոչուած թռչունը երրորդ տեսակ մը կը սկսի բուսնիլ միւսնոյն վայրի թզենիներուն վրայ, եւ երբ կը մեռնան, նոյնպէս կը ծակուին Կրաթիթէրներու ճանճիկէն՝ որ զանոնք կը խմորեն եւ կը հասունցնեն : »

Ու տակաւին նմանօրինակ բազմաթիւ բոյսեր զանազան երկիրներու մէջ, որոնց հետաքրքրաշարժ մասնաշատկութիւնները ապացոյց են բոյսերու զգացումին :

Ք. Լէյնատիէ՝ որուն մէկ յօդուածէն կը քաղենք քիչ մը առաջ յիշուած օրինակները՝ տիպէք քննէ կ'ըսէ :

« Աւելի լաւ է հաւատալ անսահմանութեանը նախախնամութեան՝ որ հոգեւորելով այն ամէն բաները՝ որ կ'ապրին երկրի վը-

բայ, բոյսէն մինչեւ մարդը, ամէնուն տուած է՝ յարաբերական զգացում մը, յարաբերական հոգի մը: Ոտքերու տակ աննշմար մեռնող շիւղ մը խոտին պէտքերուն համար՝ պատրաստ են հողը, կլիման, եղանակը, երկիրը, երկնային մարմինները. եւ որովհետեւ մենք չենք կրնար ըմբռնել այս խորհրդաւոր ներդաշնակութիւնը ո՛չ ամբողջովին, ո՛չ ալ մասամբ, պէ՞տք է ուրանանք ամբողջ բուսական աշխարհին զգացումը եւ հոգին, եւ մանաւանդ ծաղիկներուն, ինչպէս սրամտօրէն կ'ըսէ Տիկին Քլէման Բօպէն, որ մինակ բացառութիւնով մը, որ այս աշխարհի իրերուն միայն լաւ կողմը բռնած են եւ ոչ չիտու հակառակը՝ զոր կը գտնենք յանախ մարդկային բնութեան մէջ: »

Գալով ինծի, կ'ըսեմ թէ կամ պէտք է ուրանալ բոյսերու կեանքը, կամ պէտք է ընդունինք թէ կ'զգան անոնք: Կը մտածեմ թէ՝ Գերագոյն Ստեղծողը՝ որ բոյսերուն, կենդանիներուն եւ մարդերուն կեանք տուած է, եւ գործարաններ՝ ապրելու համար, ամէնուն ալ շնորհած է. զգալու կարողութիւն: Մարդ օժտուած է իմացական բարձր կարողութիւնով մը՝ զոր չունին կենդանիները. կամ՝ որ իր ամէնէն յետին աստիճանին մէջ կը ներկայանայ անոնց քով: Մարդը կ'զգայ, անասունը կ'զգայ. մարդ չա՛տ ազատ կերպով կրնայ արտայայտել ինքզինքը՝ ամէնուն. անասունը չա՛տ անիմաստ ձեւերով միայն կ'ուզէ ինքզինքը արտայայտել, իսկ բոյսերը՝ որ արտայայտելու ո եւ է միջոց մը չունին՝ իրենց մէջ կը թողուն զգացումներ, անձայն, անշարժ, անզգայութեան պատրանքը տալով մեզ: Բայց արդէն մարդերէն անասունները եւ անասուններէն բոյսերը վայրէջք մը կայ՝ զոր եթէ՛ լաւ քննելու եւ ուսումնասիրելու ըլլանք, պիտի համոզուինք թէ՛ բոյսերը զգացում ունին:

Գոցելու համար գրութիւնս՝ մէջ բերեմ Լէյնատիէի հետեւեալ չա՛տ գեղեցիկ տողերը՝ որ աւելի գրական են քան գիտական:

« Ի՞նչ նոր հրապոյր մարդուն համար, եթէ այս առանձնաշատուկ արարածները՝ պարզ նիւթ է մը աւելի ըլլային: Այս գեղեցիկ ծաղիկները՝ որոնց վրայ կը հիանանք, այն ատեն մեզի պէս ոգեւոր էակներ պիտի ըլլային: Անոնք մեր մօտիկը պիտի կազմէին կենդանի ու ապրող աշխարհ մը: Գեղեցիկ վարդ մը, սիրուն կակաչ մը անշուշտ չպիտի ըսէին ձեզի. իմ բոյսս հաճելի՞ է ձեզի, իմ սեսս կը հրապուրե՞մ ձեզ: Բայց ինչ որ պիտի ըսէին անոնք՝ միեւնոյն բանը պիտի նշանակէր. եւ մենք շատ լաւ մտիկ պիտի ընէինք: Ասիկա միեւնոյն բանը պիտի ըլլար, եւ պարզ ծաղիկ մը պիտի բաւէր միայնութիւնը լեցնելու. մարդ պիտի կրնար խօսիլ անոր հետ: »


Ի՞նչ քաղցր նիւթ երազանքի մատաղ աղջկան մը համար՝ որ վարդ մը քաղելով՝ կարենար ըսել. « Այս վարդը թերեւս ինծի պէս մատաղ աղջիկ մը եղած է. ուրիշ ժամանակ մը՝ թերեւս ան իմ ընկերս եղած է: Ո՞վ կրնայ պատմել այն տրամը՝ զոր կը ծածկեն իր տերեւները: Ուրիշ ձեւի մը տակ, երբ կ'ապրէր՝ աշխարհի վարդն եղած է ան. հիմա որ մեռած է՝ դաշտերու վարդն է. միշտ գեղեցիկ, միշտ հմայքոտ. ասիկա գեղեցկութեան անմահութիւնն է... »

ԶՈՒԱՐՃԱԼԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍ ՄԸ

(Շարունակութիւն 20 քիւէն)

Դասաւորում . — Ասկից 2000 տարի առաջ՝ մարդիկ՝ աշխարհա տափակ ըլլալ կարծելու ինչ ինչ պատճառներ ունէին : Նախ . ճամբորդելու ամենակարեւոր դիւրութիւնները կը պակսէր իրենց . յետոյ , առուտուրի սահմանները ընդլայնելու պէտքը չզգալով՝ նոր հողեր գտնելու հետամուտ չէին ըլլար : Ատլանտեան եւ Խաղաղական ովկէանոսները իրենց համար տնվերջանալի ջրային տարածութիւններ կը ներկայացնէին : Այն ժամանակուան մարդիկ ուրեմն կը կարծէին որ , Եւրոպա , Ասիա եւ Ափրիկէ աշխարհիս բովանդակութիւնն էր , իրենց ճամբորդելու եղանակը «դէպի առաջ» եւ «դէպի ետ դառնալուն» մէջ կայանալով՝ «տարածութեան» մը վրայ «տափակ» շրջելուն կասկած չէր մնար : Սակայն երբ կարելի եղաւ նաւու մը մէկ նաւահանգիստէն ճամբայ ելլելէ յետոյ՝ միշտ դէպի յառաջ ընթանալով միեւնոյն նաւահանգիստը վերադառնալ , այն ատեն տարակոյս չկար թէ նաւը



Պատկեր 1

տեղան մը կը բոլորէր եւ հետեւաբար աշխարհս կըլլար պէտք էր ըլլալ : Ասկից զատ առէք հեռագիտակ մը եւ նայեցէք դէպի հեռուն . Ա . առակերս . — (Ոտքի ելլելով) Կեցէք միւսիւ , երթամ տունէն բերեմ . մայրիկս հատ մը ունի , դրացիները կը դիտէ :


Դասաւորում . — Հարկ չկայ , դուք խելացի տղաքներ էք եւ բացատրելիքս պիտի կրնաք ըմբռնել : Համարենք թէ հեռագիտակին մէջէն ահագին ծառ մը կը տեսնէք իր ամբողջութեամբ . արմատէն դէպի գագաթը , երբ դիտած Ա . տեղերնէդ (Պատ . 1 .) հետզհետէ աւելի հեռանաք ծառէն ու երթաք Բ , Գ , Դ . տեղերը , այդ պարագաներու մէջ ծառին ստորոտը տեսնելու անկարող պիտի ըլլաք եւ հետզհետէ անոր $\frac{3}{4}$ ը , $\frac{1}{2}$ ը , $\frac{1}{4}$ ը նշմարելէ յետոյ ,

երբ շարունակէք հեռանալով վերջապէս երթալ Ե. կէտը, այն ատեն ծառին գագաթն ալ ձեր տեսողութենէն պիտի խուսափի։ Այս բանս տեղի չպիտի ունենար եթէ իրօք երկրիս դիրքը տափակ եւ կամ ուղիղ վիճակի մը մէջ գտնուէր։ Լուսինը, արեգակը, լուսաւորները որչափ որ ալ չափազանց հեռու են մեզմէ, նորէն կը տեսնանք մենք անոնք երկնքին մէջ իրենց ամբողջութեամբը եւ ոչ թէ վիրոյիչեալ ծառին պէս մաս առ մաս։ Օդը ամպոտ եղած ժամանակ միայն կ'արգիլուինք տեսնելու, ատոր տարակոյս չկայ։ Արդ, տուած ծառի օրինակիս մէջ՝ ի՞նչ բան կրնայ արգելք ըլլալ որ քանի հեռանանք այնչափ ալ ծառը հետզհետէ « վարէն սկսելով » մեր տեսողութենէն կը խուսափի։

Ա. առակերս. — Գետինն տակը կ'անցնի։

Բ. առակերս. — Առջեւը բան մը պիտի ըլլայ որ մեր աչքէն ծածկէ։

Դասաւորում. — Ի՞նչ բան կրնայ ըլլալ։



Պատկեր 2

Բ. առակերս. — Հողը, կոյտ մը, բլուր մը, լեռ մը վերջապէս կրնան արգիլել որ տեսնենք. ցամաքը հարթ չէ։

Դասաւորում. — Դաշտը սակայն հարթ է, ինչպէս ծովն ալ։ Նաու մը գալուստը կը նշմարենք հեռուէն՝ նախ իր կայմերուն ծայրը տեսնելով, յետոյ՝ մէկ մասն եւ վերջապէս բովանդակ նաւը կը պարզուի մեր աչքերուն առջեւ։ Ուղիղ գծի վրայ գտնուող որ եւ է առարկայ մը՝ իր ամբողջութեամբ տեսնել միշտ կարելի է (Պատ. 1)։ Բայց կոր գծի մը վրայ (Պատ. 2) այնպէս չէ, քանի հեռանանք՝ այնչափ ալ այդ առարկան մեր աչքէն կը կորսնցնենք, եւ ասիկա միշտ վարէն սկսելով։ Աշխարհիս որ կողմն ալ երթանք, անփոփոխելի կերպով այս այսպէս է։

Գ. առակերս. — Ըսել կ'ըլլայ որ, միւսիւ, ճամկօրէն խօսելով, երկիրս մեր տեսողութեան առջեւ « փոր կուտայ »։

Դասաւորում. — Ատոր պէս բան մը։

Դ. առակերս. — Ի՞նչ աղւոր ձեռնածութիւն։ Անանկ է նէ

միւսիւ, ես ալ ասկից վերջը երբ Տնօրէնին դարանէն գրչի ծայր բառնալու ըլլամ... փորրս պիտի տնկեմ որ չտեսնէ ըրած « մարիֆէթս » :

Դասասուն. — Լսէ՛ շարածճի: Հետեւաբար այն որ աշխարհս « կոր » է և ալ արդէն տնոր « շրջանը կը բոլորենք », կասկած չի մնար երկրիս նարինջի պէս « կլոր » ըլլալուն:

Ե. առակերս. — Շատ լաւ միւսիւ, բայց չենք կրնար ըսել որ աշխարհս « կըսկլոր » է՝ այլ « կուզ » պէտք է ըլլայ. բազմաթիւ ահագին լեռները խամպուռազուժպուռ ձեւ մը կուտան իրեն:

Զ. առակերս. — Այո, այո միւսիւ, աշխարհս կուզ է... մեր խամպուռ թէրզիին պէս:

Դասասուն. — Կլորիկ է կ'ըսեմ կոր ձեզի:

Զ. առակերս. — Ոչ, կուզ է:

Դասասուն. — Ի՞նչ փաստ ունիս:

Զ. առակերս. — Տեսէք լուսինը... մեր վրայ միշտ կը խոնդայ. լուրջ դէմք մը պիտի առնէր եթէ երկրագունտինս ձեւաւոր ըլլար:

Ե. առակերս. — Հէ՛գ տիեզերականը:

Բ. առակերս. — (Փռնքտալով) Հէ՛է՛է՛ փշուռու...:

Առակերսները ամենքի մեկանց. — Խեր ըլլայ սիրելի ընկեր:

Բ. առակերս. — Շնորհակալ եմ ձեր աղնուութենէն:

Դասասուն. — (Բարկանալով) Ի՞նչ է պէս աս. սալօն է հոս չէ թէ դասարան. դա՞ս պիտի տաք չէ նէ փռնքտաք: Աշխարհս կլոր է կ'ըսեմ, քառակուսի է կը պօռաք, յետոյ խամպուռազուժպուռ է կ'ըսէք: Զէ՛ք գիտեր թէ համեմատութիւն կ'ըսեն բան մը կայ որ դատողութիւնը կը պարզէ: Շատ պզտիկ բան մը մեծ բանի մը քով կարեւորութիւն չունի: Նարինջի կեղեւին վրայ ալ պզտիկ ցցուածներ կան, բայց միթէ նարինջը կլոր ըլլալէ կը դադրեցնեն ատոնք: Այնպէս ալ լեռները, թէեւ ոմանք նոյն 8.9000 մէթր բարձրութիւն ունին, նորէն աշխարհիս մեծութեան քով ոչինչ են: Տեսէք լուսինը, այն ալ մեր աշխարհիս պէս երկիր մըն է և հոն մեծ լեռներ կան, բայց միթէ կլոր չենք տեսներ զինքը:

Զ. առակերս. — Ախորժակամ կարկանդակի պէս:

ՀԱՃԻ ՄԻԻԹԱՐ

(Շարունակելի)

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Տգէտ ես ու խոնարհ եղա՛ր,
Դիտունի չափ պատիւ ունիս.
Դիտուն ես ու հպարտ եղար՝
Տըզէտին չափ ճպարտ չունիս.

Երբ կը տեսնես առջեւէն՝
Հըպարտութիւնը կ'երթայ,
Աղքատութիւնն ետեւէն՝
Դիտցիր որ շուտով կուգայ:

ԱՇԽԱՐՀԻՍ ՆՇԱՆԱԻՈՐ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

ՍԿԻՋՈՒՆ ՄԻՆՉՅՈՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Սպանիական Դպրոց

Մորալես. — Ծնած Պատաժողի մէջ 1509ին, մեռած 1586ին: Խղճամիտ՝ բայց ծանր գործունէութիւն մը ունի. մարդկային դէմքերու ճարպիկ հոգեբան մըն է: (Նշանաւոր գործեր՝ Սուրբ Կոյսը եւ Յիսուս, Յիսուս իր խաչը կը տանի:)

Ռիպլեա. — Ծնած 1588ին, մեռած Նաբոլիի մէջ 1656ին: Միշտ իրեն նիւթ ընտրած է վայրագութեան թատերավայրեր, սոսկալի տեսարաններ, վիրաւոր անհատներ եւայլն: Բայց բոլոր այս գարշելիութիւնները ներկայացուցած է ձեւերու ճշդութեամբ եւ գոյներու պէսպիսութեամբ մը՝ որոնք նկարչին քով տաղանդ մը կը ցուցնեն: (Գործեր՝ Ս. Բարթողիմէոս, եւայլն):

Զիւրպարան. — Ծնած Ֆանթ տը Քանթօի մէջ 1598ին. մեռած 1662ին Մատրիտի մէջ: Մազէ հագուստով, եւ դէմքերին հաւատքով վայլող կրօնաւորներու անհամար բազմութիւն մը նրկարած է:

Ֆրանսական Դպրոց

Դուզէն. — Ծնած Սուսիի մէջ 1499ին, մեռած Բարիզի մէջ 1590ին: Վերանորոգիչ արուեստին, ինքնատիպ ու շահագրգռիչ՝ ֆրանսական գեղարուեստին ժե.րդ. դարուն մէջ, իր գործերը խիստ յաջողուած են: Նկարիչ, քանդակագործ եւ փորագրիչ էր միանգամայն: (Գործեր՝ Վերջին դատաստանը, կենդանագրեր):

Գլուէ. — Ծնած 1510ին ատենները: Ֆրանսացի առաջին մեծ կենդանագիր նկարիչը: Այս ճիւղին մէջ այնքան բնական կը նրկարէր պատկերները որ «Կարծես թէ պիտի խօսին»: Բայց իր նրկարներուն մէջ ոգեւորութիւն չէ կրցած դնել. տեսակ մը պաշտութիւն կը տիրէ հոն՝ թէեւ ամէն ինչ բնական հանգամանք մը ունի: (Գործերը՝ կենդանագիրներ Կարոլոս Թ.ի, Էլիզապէթ Թագուհիին, Հանրի Բ.ի):

Վուէ. — Ծնած 1582ին Բարիզի մէջ, մեռած 1641ին: Նախանձոտ նկարիչ մը, գոյներու մէջ բնաւ չէ յաջողած: Աւելի հասցուցած աշակերտներովն է որ անուն հանած է. իր աշակերտներուն մէջ են՝ Լըպրէօն, Լըզիէօր, Մինեար:

Բուսեմ. — Ծնած 1594ին, մեռած 1665ին Հոռմի մէջ: Հին արուեստի հանճարը վերականգնանքները ձգնած է: Միօրինակ փիլիսոփայութիւն մը ծնունդ տուած՝ իր բարձր գաղափարները շրջապատած է գեղեցիկ ձեւերով, լաւ նկարով՝ բայց առանց հրապոյրի գոյներով. իր յղացումները՝ յուզիչ ըլլալէ շատ հեռի են: Պատմական տեսարաններու՝ նկարչական սեռին նորաձեւիչը եղած է: (Գործեր՝ Ժէրմանիքայի մահը, Երուսաղէմի առումը եւայլն):



ՔԼՕՏ ԼՕՐԷՆ

Գլոս Լօրեն. — Ծնած 1600ին, մեռած 1682ին Հոռմի մէջ: Հին դպրոցին միակ գիւղանկարիչը որ օդին ու լոյսին, արեւուն ոսկեղօծ ճառագայթներուն երանգները կենդանի ու ցայտուն պատկերացուցած է կտաւին վրայ: Իրեն յատուկ ոճով մը ներկայացուցած է հին Լատին աշխարհի ծովեզերեայ տեսարանները: (Գործեր՝ Կղէոպատրայի նաւէն դուրս ելլելը, Բա տը Սիւէզ, եւայլն):

Ֆիլիփ քը Շամբեկեր. -- Ծնած Պրիւքսէլի մէջ 1602ին, մեռած 1674ին Բարիզի մէջ: Բեղուն նկարիչ մը. խնամոտ ու արուեստակեալ կերպով կը գծագրէ՝ առանց բանաստեղծական աւելին, իր գոյներու միօրինակութիւնը տաղտկացուցիչ է: (Գործեր՝ Ղազարոսի յարութիւնը, Քրիստոսի համբարձումը):

Լը Պրեօն. — Ծնած 1619ին և մեռած 1690ին Բարիզի մէջ: Նշանաւոր նկարիչ, որ Լուի Ժ. Ի Ժամանակ « Գեղարուեստներու » իշխանը եղած է: Իր գոյները պաղ են՝ բայց յղացումներուն մէջ միշտ վեհութիւն մը, անկեղծութիւն մը կայ: (Գործերը՝ Գաթօնի մահը, Աղէքսանդրի պատերազմները):



ԼԸ ՊՐԷՕՆ

Միքեալ. — Ծնած 1610ին եւ մեռած 1695ին Բարիզի մէջ: Խիստ ճարպիկ՝ ո եւ է գաղափար մը յարգարելով նկարի մը վերածելու մասին: Բնական, շնորհալի եւ պատկերները, գոյները ցայտուն եւ յղացումները լայն: (Գործերը Կոյսեր, Ս. Ղուկաս՝ որ Աստուածածինը կը նկարէ, Վալ տը Կըրասի գմբէթը):

Լըզիւկօր. — Ծնած 1616ին եւ մեռած 1655ին Բարիզի մէջ: Ժէ. դարուն ամենէն միամիտ յղացումը ունեցող նկարիչը: Քիչ մը հիններուն նմանութիւնը կը կրէ. բնածին յղացում մը ունի եւ կենդանի, զգայնոտ երանգներով կը նկարէ: (Գործերը՝ Սիրոյ ծնունդը, Մուսաները, Ս. Պետրոսի տեսիլքը):

ԶԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հանրագիտակի 17րդ բիւիւն մէջ եղած Հարցումներու լուծումը

1. ՀՐԱԳԻՐ

Լուծեց՝ Պարոն Արմենակ Պ. Մանուկեան՝ Էրպա՛ա:

2. ԱԿՐԱ՝ Հնդկաստանի մէջ քաղաք մը:

3. Ժօֆրուա Տ՝Ապան (1756—1133): — Ֆիլիպ Լը Պօն՝ (1769—1804):

4. — Մոխիրը չթողուր որ օդին թթուածինը ազատ կերպով մինչեւ վառած ածուխին քափանցէ, հետեւաբար շատ քիչ օդ միայն կը բազմանայ կամ չի, արդ վառող մարմին մը ո՛րչափ քիչ թթուածին ընդունի՝ այնքան կամաց կը վառի:


ձիշդ պատասխանեց՝ Պ. Արմենակ Պ. Մանուկեան Էրպա՛ա:

19րդ բիւիւն մէջ եղած Հարցումներուն լուծումը

1. — Դիցուք թէ սափրիչին դրամարկդին մէջ պատրաստ կար	35 փարա
Առաջին յաճախորդը ձգեց	35 »
Գումար	70 »
Առաջին յաճախորդը առաւ	40 »
Մնաց	30 »
Երկրորդ յաճախորդը ձգեց	30 »
Գումար	60 »
Երկրորդ յաճախորդը առաւ	40 »
Մնաց	20 »
Երրորդ յաճախորդը ձգեց	20 »
Գումար	40 »
Երրորդ յաճախորդը առաւ	40 »
	00 »

Ըսել է թէ՛ սափրիչին դրամարկդին մէջ պատրաստ 35 փարա կար:

ձիշդ լուծեցին՝ Պարոնայր Գրիգոր Քէշիշեան. — Յակոբ եւ Միւռոն եղբարք Ալթունեան՝ Ի Կ. Պոլիս: — Արմենակ Պ. Մանուկեան՝ Էրպա՛ա: — Ստեփան Պալեօզեան՝ Սիւվրի Հիսար: — Մ. Կարապետ Ճարէկեան՝ Գուրու պէլէն: — Յակոբիկ՝ Հիւսէյնիկ:



2. Հարցումներ լուծումը

3. —

30	39	48	1	10	19	28
38	47	7	9	18	27	29
46	6	8	17	26	35	37
5	14	16	25	34	36	45
13	15	24	33	42	44	4
21	23	32	41	43	3	12
22	31	40	49	2	11	20

Սոյն թուաբանական հարցումը ճիշդ լուծեցին՝ Պարոնայք Գրիգոր Բէշիշեան, — Յակոբ եւ Միւռոն Եղբարք Ալիւսեան, — Արշակ Մէֆէրեան, — Ստեփան Պալեօզեան՝ Սիվրի Հիւսար, — Յակոբիկ՝ Հիւսէյնիկ:



ԱԶԳԻ ՊԱՏՐԱՆՔ ՄԸ

Սոյն էջը հորիզոնական դիրքով սեղանի մը վրայ դրէք, եւ աչքերնիդ՝ մէջտեղը գրուած Հանրագիտակ բառին վրայ ուղղելով, բոլորակի թեթեւ շարժում մը տուէք թուղթին. քովի վեց բոլորակները ինքնիրվրայ դառնալ պիտի սկսին:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԷՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ և ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պապը Ալի Ճատտէսի, Թիւ 33, Իգտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՐԱԹԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու յոսանման բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վանառականացի 12 օրու զաւտ առնել ուզողը պէտք է վճարէ 12 դրուշ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպազեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Եւթովիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ն, Կարապետ էֆ. Դոճեան
Թեփրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրին, Դրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Դրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արծ. Տ. Նէսրէս ԲՆ. Շաշինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Բարակապուրեան և Ընկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան
Սիւսիանի քոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր քոքըի » » »
Տիւրքմէն, Լեւոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրք և կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակադրոյժ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քանիւս ընել): Նամակադրոյժ կըող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք: